ԳԵՐԵԶՄԱՆԱԿԱՆ ՀԻՆ ԿԱԹՈՂՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ա.

Ազգերի քաղաքակրթութեան եւ արուեստի ծագումն ու ձեւակերպութիւնը իրենց զարգացման ընթացքում սերտ կապուած են իրենց կրօնի եւ հաւատալիքների հետ. Քրիստոնէական արուեստի նշանաւոր պատմաբան Kraus *մի խօսք ունի, թէ ազգերի արուեստը դերեզմաններից է սկսւում. այս ճշմարիտ է ոչ միայն նախնական ազգերի համար, որոնց շինարարութիւններն ու ստեղծագործական երեւոյթները իրօք դերեզմանների հետ են կապուած, այլ եւ յետագայ դարերի նոր հոսանքների ընդունելութեան ժամանակ, համապատասխան նոր արուեստի եւ մշակոյթի ստեղծագործութեան ազդիւր է դառնում, հետզհետէ հնից դէպի նորը փոխակերպուելով: Եթէ Եգիպտոսի արուեստն ու մշակոյթը պատմութեան մէջ իրենց բազմատեսակ երեւոյթներով հոգու անմահութեան հետ կապուած հասկացողութեան մարմնաւորումն է, եթէ յունական արուեստն ու գրականութիւնը իրենց բոլոր ճիւղերով կապուած են եւ հասկանալի յոյն ժողովրդի կրօնական ըմբռնումներով միայն, քրիստոնէական կոչուած արուեստն էլ նոր վարդապետութեան հաստատութեան հետ, երեւան է բերում նոր ստեղծագործութիւն ազգերի մէջ, հնից հետզհետէ դէպի նորագոյնը եւ տարբեր գաղափարումն ընթանալով: Կատակոմբաների արուեստը միջին օղակն է հեթանոսականի եւ քրիստոնէականի ծագման եւ զարգացման ուրուագծում: Նման երեւոյթ նկատում ենք եւ Հայոց մէջ:*

Հայ արուեստի նախնական շրջանների հասկացողութեան համար մեծ նպաստ են բերում մեր երկրի այլ եւ այլ կողմերում ցրուած դերեզմանական կոթողների մնացորդները, որոնք դեռ եւս հարկաւոր ուշադրութեան չեն արժանացել: Տարաբաղդաբար նոցանից շատ քչերը ամբողջութեամբ հասել են մեզ, մեծագոյն մասով եղծուած, մասամբ կամ բոլորովին փչացած, կտոր կտոր եղած, բայց այնպիսի քանակութեամբ, որ բաւական են գաղափար կազմելու նրանց մասին: Դեռ եւս մենք լիովին նրանց զննութեան եւ տարածման մասին ծանօթութիւն չունինք, բայց ինչ որ վերջին տասնեակ տարիներում պրոֆեսոր Մառին, Թորամանեանին եւ մեզ յաջողուել է ծանօթանալ եւ ի մի հաւաքել, մի հոյլ է, արժանի ընդարձակ եւ բազմակողմանի ուսումնասիրութեան:

Այստեղ եւս նոյն դիտական ուսումնասիրութեան մեթոդին ենք հետեւում, ինչ որ մասամբ փորձեցինք նախընթաց ուսումնասիրութեան մէջ, որ ճարտարապետական ոչ երեւոյթների լուսաբանութեան էր նուիրուած: Պարզ ուսումնասիրութիւնն իսկ ցոյց է տալիս, որ նրանք չեն պատկանում հայ ճարտարապետութեան ծագման, ոսկեդարի շրջանին, որ է. դարն է, ինչպէս տեսանք: Այն պատկերագրութիւնը եւ զարդաքանդակները, որ մենք տեսնում ենք այդ կոթողների վերայ, տարբեր ոճ, ձեւակերպութիւն եւ մոտիւներ ունին, քան մեր է. դարի թուականով կամ ժամանակով յայտնի շէնքերը: Նրանք չեն երեւում նաեւ Բագրատունեաց կամ ԺԳ. դարի վերածնութեան շրջաններում: Ապա, ուրեմն, պատկանում են աւելի հնագոյն դարերին, մի տարբեր դեղարուեստական հոսանքի, որ արդէն մեռնել է սկսում եօթներորդ դարում:

Եւ յիրաւի, նրանք ծագումով եւ տեղով ամենամեծ աղերս են ցուցաբերում մեր բազիլիք եկեղեցիների ծագման, տեղի եւ ոճի նկատմամբ: Այս մի երեւոյթ է, որ ինքնին մատնանշում է նրանց հասկացողութեան ուղին եւ տեղը մեր արուեստի պատմութեան մէջ: Մեզ յայտնի չէ, գրեթէ, որ եւ է նման դերեզմանական կոթող, որ կապուած չլինի տեղով բազիլիք շէնքի հետ: Այստեղ եւս նկատում ենք զուտ հելլենիստականից միջագետական–ասորական եւ տեղական սասանեան արուեստների փոխ–ազդեցութիւնը,